ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» հոկտեմբեր 2016թ. № 144-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի N 149-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1294-Ն որոշման N 1 հավելվածի 14-րդ կետի 4-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2015 թվականի հունիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության պաշտոնական կայքի սպասարկման կարգը հաստատելու մասին» N 149-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1. 4-րդ կետը 8-րդ ենթակետից հետո լրացնել նոր 8.1 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1 Գնումներ

ա. Աշխատակազմ

բ. Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ»

2. 9-րդ կետում՝

1) ուժը կորցրած ճանաչել 8-րդ ենթակետի «բ» պարբերությունը

2) լրացնել նոր 8.1 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.1 Գնումներ բաժնի՝

«Աշխատակազմ» և «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» ենթաբաժիններում տեղադրվում են.

ա) գնման ընթացակարգերի հայտարարություններ

բ) գնման ընթացակարգի արձանագրություններ (ներառյալ մասնակիցների հայտերը, մրցույթի հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, կնքված հանձնման-ընդունման արձանագրությունները և հաշիվ-ապրանքագրերը)»:

3. 11-րդ կետը լրացնել նոր՝

ա) 11.1 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.1 Գնման ընթացակարգի գնումները համակարգողը համապատասխան գնման ընթացակարգի արձանագրությունը աշխատակազմի ղեկավարի կողմից հաստատվելուց հետո ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության բաժնին է տրամադրում տվյալ ընթացակարգի մասնակիցների հայտերը, մրցույթի հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, կնքված պայմանագիրը (պայմանագրերը): Պայմանագրերի շրջանակներում կազմված հանձնման-ընդունման արձանագրությունները և հաշիվ-ապրանքագրերը աշխատակազմի հաշվապահությունում սահմանված ձևակերպումներից հետո ոչ ուշ, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության կողմից գրությամբ տրամադրվում է աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության բաժնին:»:

բ) 11.2 ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«11.2 ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ պետական հիմնարկ) կողմից իրականացվող գնման ընթացակարգերի վերաբերյալ սույն կարգի 11.1 կետում նշված տեղեկատվությունը կայքում տեղադրվելու նպատակով՝ ուղեկցվող գրությամբ հանձնվում է աշխատակազմի ղեկավարին: Տրամադրվող տեղեկատվության համար պատասխանատու է պետական հիմնարկի տնօրենը:

Աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության կապերի բաժինը գնման ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրում է կայքում ստանալուց հետո ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը:»:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԲԱԴԱԼՅԱՆ

«26» հոկտեմբեր 2016թ.
ք.Երևան